

Գեղամ Սեւան, Մփիոքահայ Գրականութեան Ուրուագծեր  
(1946–1985), ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, Երեւան, 1997,  
367 էջ:

Նկատելով որ 1980ին իսկ, երբ լոյս տեսաւ Գեղամ Սեւանի սոյն աշխատասիրութեան առաջին հատորը<sup>1</sup>, արտայայտուած ենք այս շատ շահեկան եւ կարեւոր «ուրուագծային պատմութեան» մասին<sup>2</sup>, անհրաժեշտ եւ անխուսափելի կը դառնայ որ շարունակենք եւ ամբողջացնենք մեր հոն կատարած քննութեան ու դատումի փորձը:

Այս՝ որպէսզի ընթերցողներն ու մեր գրականութեան ապագայ պատմագիրը կամ պատմագիրները կարենան լրացուցիչ, եւ անպամանօրէն նաեւ համապարփակ պատկեր մը ունենալ տուեալ աշխատասիրութեան ամբողջութեան վերաբերեալ մեր դատումներուն ու կատարած նշումներուն մասին:

Բարեբախտաբար իր անակնկալ եւ կանխահաս մահէն (1991) առաջ Գեղամ Սեւան արդէն իսկ աւարտած էր եւ յանձնած տպագրութեան Մփիոքահայ Գրականութեան Պատմութեան Ուրուագծերու երկրորդ մասը, որ սակայն մնացած էր անտիպ՝ վստահաբար Հայաստանի վերջին տարիներու, 1990էն ի վեր, իրադարձութիւններուն հետեւանքով:

Սովետական Միութեան փլուզումի նախանշանները զգալի էին արդէն այն ատեն, նոյնիսկ 1990էն առաջ, եւ Միութեան բոլոր հանրապետութիւնները անխտիր սկսած էին խլրտիլ՝ տուեալ ժամանակաշրջանին յատուկ խարխաբումի անորոշութեամբը յատկանշուող մթնոլորտի մը մէջ: Տասնամեակ մը ետք, ներկայիս, գիտենք արդէն թէ ինչ կատարուած ու փոխուած է հոն, ի մէջ այլոց նաեւ՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ: Միութեան կազմալուծումին աւերներ, բնականաբար, կազմալուծուած են նաեւ Սովետական հասարակարգի շրջանին հաստատուած պետական կառոյցի կարգն ու սարքը եւ կեդրոնացեալ գործելակերպի մը յատուկ կազմակերպուած աշխատանքի բոլոր լծակները: Հաստատութիւնները, հիմնարկները, ընկերային կամ պետական ծառայութիւններ, ստեղծագործական աշխատանքի (իմա՝ արուեստներ, գիտութիւն, եւլն.) եւ ընդհանրապէս՝ հանրապետութիւններու մշակութային կեանքի հովանաւորումը: Եւ անխուսափելիօրէն, հետեւաբար, նաեւ պետական հրատարակչական գործը:

Այս պատճառով է անշուշտ որ Գեղամ Սեւանի սփիւռքահայ գրականութեան նուիրուած գրականագիտական աշխատասիրութեան Բ. հատորը ի վերջոյ լոյս կը տեսնէ 1997ին, եօթ կամ ութ տարուան յապաղումով:

Մինչ այդ Հայաստանի մէջ փոխուած են կարգերը, իշխանութիւնը (կամ աւելի ճիշդ՝ վարչակարգը) եւ այդ հիմամբ գործող կառավարութիւնը, օրէնքները, եւ ուրեմն նաեւ՝ պետական հրատարակչութեան (որ գոյութիւն ունենալէ դադրած է) գաղափարական կամ գաղափարախօսական անհանդուրժողութիւնը:

Չարմանայի կերպով, սակայն յետ—մահու այս հրատարակութեան խմբագիրները կամ «գրախօսներ»ը չեն փորձած խմբագրական հպումներով սրբագրել Բ. Հատորին մէջ եւս առկայ եւ Խորհրդային շրջանին յատուկ գաղափարախօսական նախատրամադրուածութիւնը, որ դժբախտաբար խոչընդոտ կանգնած է Գեղամ Սեւանի բարեխիղճ եւ գիտական բծախնդրութեամբ յագեցած աշխատութիւն մը պատրաստելու ճիգին:

Ա. Հատորի հրատարակութեան առիթով, ի մէջ այլոց կատարած էինք նաեւ հետեւեալ նշումը.—

«... Այս հասկնայի կը դառնայ, երբ նկատի ունենանք իր մօտեցման եղանակը: Գեղամ Սեւանի գրական չափանիշը այս պարագային կարծէք հայրենասիրութիւնն է: Աւելի ճիշդ բնորոշելու համար՝ Հայաստանի կողքին կանգնած ըլլալը: Գրողը կամ բանաստեղծը, եթէ ընդունած է Սովետական Հայաստանի իրականութիւնը, հոգ չէ թէ նոյնիսկ յապաղումով, վաւերական գրող կամ բանաստեղծ է: Թող ներուի մեզի տարակարծիք ըլլալ եւ հաստատել, թէ գրական ստերձագործութեան մը արժէքը չի չափուիր հայրենասիրութեամբ կամ այսպէս կոչուած «զաւաճանութեամբ»: Հայրենասիրութիւնը բաղձալի է — ի՛նչ խօսք— բոլորին համար, բայց երբեք գրական չափանիշ չէ: Այսպէս ինչպէ՞ս պիտի կարենայինք դատել Մեծարեւոյցի կամ Չարիֆեանի բանաստեղծութիւնը, օրինակի համար: Կամ՝ օտար գրականութիւնը, ուր հայրենասիրութիւնը կամ հայրենասիրական գրականութիւն կոչուածը ոչ տեղ ունի, եւ ոչ ալ գոյութիւն: Այլ հարց թէ հայրենասիրութիւնը ինչպէս կ'ըմբռնէ եւ կը սահմանէ այս կամ այն գրողը, եւ այս պարագային՝ Գեղամ Սեւան»<sup>3</sup>:

Եւ եզրակացուցած այսպէս.—

«Կը կատարենք այս դիտողութիւնները, յուսալով որ Գեղամ Սեւան կ'ամբողջացնէ իր այս աշխատասիրութեան երկրորդ մասը (1945—1980 թթ.), որ կրնայ այս իմաստով շատ աւելի փորձանարար ըլլալ եւ զինք առաջնորդել ոչ—գրական եզրակացութիւններու: Այս անպայմանօրէն կրնայ վրիպեցնել այսքան կարեւոր եւ լրջութեամբ սկսուած գործ մը իր բուն նպատակէն, եւ դարձնել զայն խոցելի»<sup>4</sup>:

Գեղամ Սեւան, եթէ ողջ մնացած ըլլար, վստահաբար ի՛նք պիտի վերախմբագրէր գէթ Բ. Հատորը, անհրաժեշտ յապաւումներն ու

յաւելումները կատարելու մտահոգութեամբ: Յաւայի է որ չընծայուեցաւ իրեն այդ առիթը, եւ այսպէս ալ գործը կը մատուցուի մեզի խոցելի վիճակի մէջ՝ վերոյիշեալ նշումներու յուսարձակին տակ դիտուած:

Այլապէս մեր ճանչցած Գեղամ Սեւանը, որ իր դաւանած գաղափարախօսութեան (համայնավար վարդապետութեան, եւ ո՛չ թէ համայնավար վարչակարգերու կուսակցական կամ քաղաքական մարզանքներուն, գաղափարախօսական խախտումներուն ու վրիպանքին) փարած մնալով հանդերձ մինչեւ իր կեանքին վերջին օրերը, անպայմանօրէն վերատեսութեան պիտի ենթարկէր աշխատասիրութեան գէթ Բ. մասի մշակման եղանակը՝ այլ խօսքով՝ անցեալ եօթանասուն տարիներուն (սովետական շրջանի) յատուկ մտածողութեան պարտադրած նախատրամադրուածութիւնը: Որովհետեւ՝ հակառակ իր գաղափարաբանական սկզբունքայնութեան, ան ունէր անաչառ մտաւորականին վայել լայնախոհութիւնն ու մանաւանդ գիտակցութիւնը՝ ժամանակին եւ յարափոփոխ իրականութեան հետ քայլ պահելու անհրաժեշտութեան:

Արդ՝

Ա. հատորը պատրաստած ատեն ան նպատակաբարձար նկատած է կատարել հետեւեալ բաժանումները եւ ըստ այնմ ներկայացնել սփիւռքահայ գրականութեան պատմութեան՝ «ուրուագծային» մշակումը՝

«Կարօտի Գրականութիւնը», «Նահանջի... Երգ», «Խօսք Բանաստեղծութեան Մասին Նախքան Բանաստեղծութիւնը», «Մի Աշխարհ... Երկու Ընկալում», «Յանուն Գոյատեւման» եւ «Վերածնուած Հայրենիք»:

Ասիկա 1920–1945 շրջանի մեր սփիւռքի գրականութեան ուսումնասիրութեան պարագային կրնայ ըլլալ ըմբռնելի եւ նոյնիսկ՝ արդարանալի: Այս՝ պարզ այն պատճառով որ մեր ներկայ հասկացողութեամբ «սփիւռքահայ գրականութիւն» կոչածը գոյութիւն չունէր տակաւին այն ատեն՝ ըլլալով իր կազմաւորման փուլին մէջ: Եւ կարելի է նոյնիսկ հաստատել, թէ այս բաժանումները մասամբ կրնան բնորոշել կազմաւորման հանգրուանային գարգացումները, եւ հուսկ ուրեմն՝ սփիւռքահայ գրականութեան ծննդոցի հոլովոյթը:

Սակայն Բ. հատորի (1946–1985 ժամանակաշրջանի) նոյնանման բաժանումները տրամաբանական չեն եւ – անխուսափելիօրէն հետեւաբար – խաբուսիկ տպաւորութիւն մը կը թողուն: Առաւելաբար՝ որովհետեւ անհիմն են կամ անիրական, չրսելու համար սխալ՝ եւ զարմանալի չէ ուրեմն որ վերապահութեամբ ընկալուին: Արդարեւ, 1945էն ետք, այսինքն Երկրորդ Համաշխարհային Պատերազմի աւարտին, սփիւռքահայ գրականութիւնը արդէն իսկ տարազելի իրականութիւն մըն է՝ իր կենսունակութեամբ, զայն յատկանշող ինքնուրոյն եւ անհերքելի գոյութեամբ ու նուաճումներով:

Հայրենական հոգերու կորուստի ու պապենական շէն ու քաղաքի կարօտի մորմոքը իր գեղեցկագոյն արտայայտութիւնը ունեցած է արդէն գիւղագիրներու գործերուն մէջ՝ հայ ժողովուրդի գրականութիւնը հարստացնելով գրական—գեղարուեստական սքանչելի էջերով: Գիւղագիրները — բոլորը, առանց բացառութեան՝ երէց վերապրողներ — կատարած են իրենց գործը, երգած են իրենց տառապանքն ու դառնութիւնը, եւ լռած արդէն այն ատեն՝ 1945էն ետք, կամ առաւելագոյնը՝ նոյն տասնամեակի աւարտին: Ոմանք շիջած են, ուրիշներ՝ սպառած: Ու վերջ գտած է հայ գրականութեան յետ—Եղեռնեան գիւղագրութիւնը:

Կարօտի գրականութիւնը՝ այլ հարց կամ իրականութիւն: Վերապրողներու երէց սերունդը ներկայացնող գրողները երգած են նաեւ իրենց կարօտը նոյն այդ գիւղագրական գործերուն մէջ: Ասոնց հետեւող կրտսերները սակայն—որքերու սերունդ յորջորջումով ծանօթ մատղաշ վերապրողներէն անոնք, որոնք իրենց կեանքը նուիրեցին գրականութեան — չէին ճանչցած կամ չէին կրնար յիշել հայրենի շէնն ու տունը, եւ բնականաբար անոնց կարօտի երգը տարբեր պիտի ըլլար բնոյթով: Անոնցը գիւղի կամ ծննդավայրի կարօտ չէր, այլ պարզօրէն՝ հայ ժողովուրդի էութեան մաս կազմող վաղնջական աղապատանքը՝ հանդէպ հայոց աշխարհի դիւցազնական բայց անվերադարձ անցեալին, որ դարերու ընթացքին քալած է մեր հետ եւ մինչեւ այսօր կը հետեւի մեզի՝ աշխարհի բոլոր փողոցներուն կամ սփիւռք կոչուած դժոխքին մէջ: Հայու նշանաւոր, եզակի եւ անընկճելի կարօտը:

Ասիկա տարբեր կարօտ մըն է. համայն հայութեան դարաւոր կարօտը, որ կապ չունի միւսին հետ: Տարագրեալ գանդուածներու կարօտին հետ: Հայրենի հողի ծնունդ, եւ այդ հողին էութեամբ եւ սիրով սնուած, հոն հասակ առած սերունդի խլիակները — հուր ու սուրի գեհնէն հրաշքով փրկուած երէցները — բնական է որ կարօտնային բռնագրաւուած իրենց երկրին, շէններուն ու հանդերուն, եւ ողբային անոնց կորուստը: Անոնք այդ երկրին բնիկներն էին, ինչպէս իրենց հայրերն ու նախահայրերը իրենցմէ առաջ, մինչդեռ այդ նոյն սերունդի գաւազները չէին այլեւս բնիկները հայոց չորսհազարամեայ հայրենիքին: Անոր գոյութեան — պատմական իրականութեան — ու ողիսականին գիտակցութիւնը ունենալով հանդերձ, գաւազները տարբեր էին սակայն նոյնիսկ մօտաւոր անցեալի բնիկներէն, իրենց ծնողներէն, որովհետեւ հայրենի հողի առհաւական ազդեցութիւնը չէին զգացած երբեք: Այդ իմաստով գրկեալներ էին անոնք, եւ բնականաբար ուրեմն իրենցը նաեւ չէր եղած տազնապը՝ հայրենի երկրի կորուստին: Եւ կարօտը՝ այդ երկրին:

Անհրաժեշտ է կատարել այս ճշգրտմը եւ գանազանել յետ—Եղեռնեան երէց սերունդի պապենական տան կարօտը՝ հայուն հինաւուրց ու

տարերային կարօտախտէն, որպէսզի կարենանք ճշգրիտ մատնանշել Գեղամ Սեւանի տուեալ աշխատասիրութեան երկրորդ մասի մէջ այս հարցին վերաբերեալ յառաջացած շփոթը: Պարզօրէն, կ'ուզենք նշել, թէ 1945էն ետք մշակուած սփիւռքահայ գրականութիւնը կարելի չէ նոյնաման բաժանումներու պիտակներով ներկայացնել: Ինչպէս օրինակ՝

«Շարունակուող Կարօտի Գրականութիւն» (Գլուխ Առաջին), կամ՝  
«Նոր Կարօտի Գրականութիւն» (Գլուխ Երկրորդ):

Արդարեւ, կարօտի գրականութեան մշակումը այդ շրջանին հասած էր արդէն իր լրումին: Մեր հասկացողութեամբ ասիկա ծանօթ իրականութիւն է — հաստատուած պատմական իրականութիւն: Եւ այս՝ ընդունելով հանդերձ, թէ Եղուարդ Տարօնեանի եւ Յակոբ Մնձուրիի նման երէց գրողներու պատմուածքները մաս կը կազմեն նոյն յետ—Եղեռնեան կարօտի գրականութեան: Պէտք է ի մտի ունենալ որ ասոնց գիրքերը, թէեւ յապաղումով արժանացած են հրատարակութեան (յիսունական թուականներ), բայց երկնուած են շատ աւելի առաջ, եւ յամենայն դէպս, մշակման եղանակով եւ ոգիով կը պատկանին աւելի վաղ շրջանի մը:

Հոն ալ վերջ կը գտնէ «կարօտի գրականութիւն»ը: Եւ չի շարունակուիր: Վերապրող որբերու սերունդը կը մշակէ, ատկէ ետք, որբի հոգեբանութեամբ թրծուած գրականութիւն մը: Որբանոցային կեանք, հիւղաւաններու տխուր առօրեայ, ընչազրկութիւն ու չքաւորութիւն, գրկանք ու դառնութիւն, եւ գոյատեւելու պայքար՝ օտար ասիերու վրայ: Անդրանիկ Ծառուկեանի, Մուշեղ Իշխանի եւ Սմբատ Փանոսեանի նման գրողներու վիպագրային կամ բանաստեղծական ստեղծագործութեան ենթահողը այս է, եւ ո՛չ թէ՛ պայպենական տան կամ հայրենի դիւղի կարօտը: Ասոնց եւ իրենց սերնդակիցներուն համար Արեւմտեան Հայաստանի կորուստի վիշտը անձնական կորուստի հետեւանք չէ, այլ՝ մեր պատմութեան որոշ մէկ շրջանին կատարուած իրողութեան մը — նոր սեւ էջի մը — գիտակցութեան յաճախանքը: Փոխանցուած կամ ժառանգուած տաղանապ մը, որ համահայկական բնօյթ ունի: Յաջորդող սերունդը (այսինքն մենք՝ տարագրեալներու գաւակները) նաեւ տառապած է ու կը տառապի տակաւին նոյն գիտակցութեամբ, եւ նոյնիսկ եւ նոյնպէս՝ այսօրուան նորագոյն սերունդը — երիտասարդները:

Կարելի է հետեւցնել, ուրեմն, որ շարունակուող եւ կամ նոր կարօտի հարց չի կրնար ըլլալ, այլ լոկ միայն՝ մեր պատմութեան կողմէ բոլորիս կտակուած իրաւագրկումի գիտակցութեան: Արեւմտեան Հայաստանը կորսնցուցած ըլլալու գիտակցութեամբ շողախուած դառնութեան: Որ բոլորովին տարբեր է կարօտի զգացումէն: Եւ այս առընչութեամբ՝ անհրաժեշտ է շեշտել, թէ պէտք չէ շփոթել ներկայ Հայաստանի (նախապէս՝ Խորհրդային Հայաստան) հանդէպ մեր զգացածը — սէրը,

նուիրումը, պաշտամունքը, հայրենասիրութիւնը — մեր պատմութեան մեծագոյն աղէտի պատճառած դառնութենէն բխող հայրենասիրական անդրադարձին կամ զգացումներուն հետ: Անշուշտ որ կը սիրենք Հայաստանի Հանրապետութիւնը — խորհրդային կամ այլապէս — որովհետեւ հայոց հայրենի հողին, Պատմական Հայաստանի անբաժանելի մէկ մասը կը կազմէ ան: Այս՝ նշելու համար, թէ հայութեան հայրենասիրութիւնը նորութիւն չէ, եւ թէ մեր ամբողջ պատմութեան ընթացքին պայմանաւորւած չէ եղած տարածքային կամ քաղաքական—գաղափարախօսական նախասիրութիւններով եւ խտրականութեամբ:

Այնպէս որ՝ Արեւմտեան Հայաստանը կորսնցնելէ ետք Արեւելեան Հայաստանի մէկ մասին կառչելու, կամ անոր մէջ փրկութիւն փնտռելու, հարց չենք ունեցած, չունինք: Հայր միշտ սիրած է իր հայրենիքը — տարագրութենէն առաջ, տպագրութեան ընթացքին եւ ատկէ ետք, ու մինչեւ այսօր՝ ուր ալ գտնուի կամ ապրի: Հետեւաբար, կարելի չէ սփիւռքահայ գրականութեան յետ—պատերազմեան (Բ. Աշխարհամարտ) զարգացումն ու վերընձիւղումը վերագրել Հայաստանի Հանրապետութեան (այն ատեն՝ Խորհրդային Միութեան անդամ) գոյութեան եւ աստիճանական վերականգնումին կամ բարգաւաճումին: Կամ՝ մեր փարոսմին: Ճիշդ չէ: Սփիւռքահայ գրողները մէկ օրէն միւսը, յանկարծ, չէին գտած այդ փոքր Հայաստանը: Գիւտ մը կամ յայտնութիւն մը չէր անոր գոյութիւնը, այլ՝ ատկէ առաջ ալ, Ա. Աշխարհամարտի աւարտէն անմիջապէս ետք իսկ, հաստատուած պատմական իրականութիւն: Տրամարանօրէն, ուրեմն, կարելի է եզրակացնել, թէ անոնց գրական ստեղծագործութեան մէջ առկայ հայրենասիրութիւնը պարագայական եւ նորայայտ երեւոյթ չէ:

Հայ գրականութիւնը ընդհանրապէս — իր արեւմտահայ եւ արեւելահայ բաժիններով — տասնիններորդ դարու երկրորդ կէսէն սկսեալ մանաւանդ, յատկանշուած է ազգային բովանդակութեամբ՝ առաւելաբար: Այսինքն եղած է ազգային գրականութիւն: Առանց գիրքի կամ աղբիւրի դիմելու, փորձենք յիշողութեամբ արձանագրել հոս կարելի եղածին չափ անուն — Խաչատուր Աբովեան, Յովհաննէս Թումանեան, Աւետիք Իսահակեան, Դերենիկ Դեմիրճեան, Խրիմեան Հայրիկ, Ղեւոնդ Ալիշան, Ռաֆֆի, Դանիէլ Վարուժան, Սիւսանթո, Ռուբէն Զարդարեան, Յակոբ Օշական, Վահան Թէքէեան, Երուանդ Օտեան, Զապէլ Եսայեան, Վահան Թոթովեանց, Եղիշէ Զարենց, Խաչիկ Դաշտենց, Պարոյր Սեւակ, Յովհաննէս Ծիրազ — ու մտարբերենք անոնց գործին բովանդակութիւնը, եւ արդէն իսկ հաստատած կ'ըլլանք այս իրականութիւնը: Երբ բաղդատենք մերը այլ ժողովուրդներու գրականութեանց հետ, նոյնը չենք կրնար հաստատել անոնց պարագային: Անոնցմէ իւրաքանչիւրի գրականու-

թեան կարելի է ազգային դիմագիծ մը տալ, բնական է, հիմնուելով միայն իրենց մայրենի լեզուի գործածութեան վրայ: Այդքան: Բովանդակութեամբ միշտ, գրեթէ առանց բացառութեան, անոնց գրականութիւնը համամարդկային է: Եթէ կ'ուզէք՝ մարդկային: Ընկերային, հոգեբանական, կենցաղային, իմաստասիրական, եւլն: Նիւթերը, բնականաբար, յաճախ կը վերցուին իրենց կեանքէն եւ անխուսափելիօրէն կը պատկերացնեն զայն: Բայց խորքով ազգային չեն: Այլ խօսքով՝ չեն զբաղիր իրենց ազգային խնդիրներով — գոյութեան տազնապ, պայքար, օտար լուծ կամ իշխանութիւն, ազատագրութեան իղձ, ձուլումի վտանգ, ազգապահպանում, եւ մասամբ նոցին: Պատճառ չունին զբաղելու: Որովհետեւ այս բոլորը իրենց համար իմանալի չեն՝ նկատելով որ նմանօրինակ ազգային—գոյութեանական հարցեր չունին:

Բայց անոնցը նաեւ գրականութիւն է, եւ աւելի՛ քան մերը՝ զերծ ըլլալով մանաւանդ ազգային գրականութեան ոլորտապտոյտին մէջ թիափարելու հարկադրանքէն: Գրականութիւն՝ ուր հայրենիքն ու հայրենասիրութիւնը ո՛չ նախապայմաններ են, եւ ոչ ալ գրական—գեղարուեստական չափանիշ: Այս ճիշդ է ընդհանրապէս բոլոր փողովուրդներու գրականութեանց համար, եւ պէտք է ճիշդ ըլլայ նաեւ մեզի համար: Երկու չափի եւ կշիռի հարց չի կրնար ըլլալ: Բայց եւ այնպէս կը զիտակցինք, գիտենք թէ մեր պարագային հայրենասիրութիւնը, բաղկացուցիչ տարրը կազմելով մեր ազգային բովանդակութեամբ ծանրաբեռնուած գրականութեան, կարելի չէ զայն զանց առնել կամ ուրանալ: Պատճառ չունինք, յամենայն դէպս: Անհերքելի իրականութիւն մը կարելի չէ ուրանալ, եթէ նոյնիսկ որոշենք քմահաճօրէն չտեսնել կամ չընդունիլ զայն: Այս ճիշդ ըլլալով հանդերձ, սակայն, արտօնուած չէ մեզի հայրենասիրութիւնը իբրեւ գրական—գեղարուեստական նախապայման կամ չափանիշ օգտագործել՝ նաեւ մեր գրականութիւնը սերտած ատեն:

Հիմնուելով դատելու այս կերպին վրայ, Գեղամ Սեւանի Բ. հատորի Գ. գլուխը եւս — «Յանուն Հայրենիքի... Պատուանդուած Հայրենիքով» — որպէս գիրքին էական ու թեմաթիք մէկ բաժանումը, կ'ըլլայ շատ վիճելի, եւ անշուշտ՝ անընդունելի: Որովհետեւ, մեր կարծիքով, հիմնուած չէ փաստացի տուեալներու վրայ: Սփիւռքահայութիւնը, իր գրողներով ու մտաւորականներով, գոյութիւնը պահպանելու մահու եւ կենաց պայքար կը մղէր — կը մղէ մինչեւ այսօր — եւ միջոցներ չունէր հայրենիքին օգնութեան ձեռք երկարելու: Հայրենիք մը, որ իր օգնութեան կամ ծառայութեան պէտք չունէր այն ատեն, եւ ոչ ալ ի վիճակի էր իբրեւ պատուանդան ծառայելու հայութեան իրաւագրկուած եւ անպաշտպան մնացած հատուածին:

Տարակոյս չկայ անշուշտ որ հայուն հայրենասիրութիւնը կը մնար

առկա՞ծ՝ յոյս ու կորով ներշնչելով հայ ազգի աշխարհացրիւ բեկորներուն: Հայրենասիրութիւն՝ որ ընդելուզուած հայութեան էութեան, դարերու ընթացքին պահպանած էր զինք ու պաշտպանած ամէն կարգի փորձանքի եւ փորձութեան դէմ: Պատմական վերիվայրումներ, ներխուժումներ, պատերազմներ, օտար իշխանութիւն, հայրենի հողամասերու գրաւում, սպանդ, տեղահանութիւն, հալածանք, գրկանք, այլասերում, եւ յն: Ազգային ընդոժին գիտակցութիւն՝ եթէ կ'ուզէք, որ կապ չունի հայրենի այս կամ այն հողամասին հետ: Եւ ուրեմն, ներկայ դարասկիզբի Եղեռնէն եւ նոր բայց աշխարհատարած սփիւռք ըլլալէ ետք եւս նոյն հայրենասիրութեամբ էր որ կը փարէին անոնք փոքրացած, կոտորակուած Հայաստանին՝ անկախ գաղափարախօսական կամ քաղաքական նկատումներէ:

Բայց տարագրեալ եւ սփիւռքացած զանգուածներուն համար նախ եւ առաջ կար ու կը մնար գաղթականական գեհնային կեանքը — դժուարութիւնները, անօթութիւնն ու գրկանքը, այլասերումը, եւ ընդհանրապէս իրենց գոյութեան սպառնացող վտանգը: Սփիւռքահայութեան ուշադրութիւնը այն ատեն կեդրոնացած էր — եւ է՛ցարդ — գլխաւորաբար իր գոյութիւնը պահպանելու վրայ: Հայկական նորաստեղծ սփիւռքը ունէր իր տազնապներն ու հրամայականները, ի՛ր կեանքը կամ դժոխքը: Սփիւռքահայ գրողը՝ ըլլալով նոյն միջավայրին ու տազնապներուն ծնունդը, կրնար գրել միայն այդ կեանքին կամ դժոխքին մասին: Եւ փաստօրէն՝ իր մշակած գրականութեան բովանդակութիւնը այս եղած է, եւ է՛՝ մինչեւ այսօր: Մշակուածին որակն ու գրական արժէքը ինչպէս նաեւ արժեւորումը, այլ խնդիր են: Այս եւս՝ իր կարգին:

Հիմնելով իր աշխատասիրութիւնը կանխամտածուած թեզի մը վրայ, որ խորքով եւ արեւելումով ենթակայական է զարմանալիօրէն, Գեղամ Սեւան գտած է ինքզինք այդ վարկածային ընդլթովն իսկ խոցելի «միտումը» (բառը իրն է) համոզիչ ընծայելու եւ արդարացնելու հարկադրանքին տակ: Հայրենասիրութիւնը կամ «հայաստանասիրութիւն»ը տեսակ մը հանգանակի վերածած, փոխանակ հեղինակներուն ստեղծագործութիւնը գրական մանրագնին ուսումնասիրութեան եւ վերլուծումի ենթարկելու, հետեւողականօրէն փորձած է զանոնք դասաւորել իր նախասիրած սահմանումներու ծիրէն ներս — «կարօտի» կամ «չարունակուող կարօտի» գրականութիւն, եւ յն: Մշակումի այս եղանակը վրիպեցուցած է զինք ըուն նպատակէն, որ է՛ սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը — հոգ չէ թէ ուրուագծային կերպով — գրել: Արդարեւ, ան ըտլոր գրողներուն ու բանաստեղծներուն երկերը նոյն փորձաքարին զարնելով՝ ժողովրդական արտայայտութեամբ, «նոյն ջուրով լուացած» է զանոնք: Արդիւնքը եղած է այն, որ երէցներն ու կրտսերները,

տաղանդաւորներն ու անտաղանդները բոլոր հաւասարած են, եւ անոնց ստեղծագործութեանց միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները — որակ, նիւթ, խորք, ձեւ, մասնաշատկութիւն, ոճ, մատուցողական խառնուածք ու հոգեխառնութիւն — գանց առնուած են:

Եւ այսպէս՝ օրինակ, Արամ Հալկազի եւ Սուրէն Մանուէլեանի (Մ. Նահանգներ), Յակոբ Կարապետեցի եւ Նուպար Ակիչեանի (Մ. Նահանգներ), Չարեհ Որբունիի կամ Հրաչ Չարդարեանի եւ Աւետիս Ալիքսանեանի (Ֆրանսա), Չարեհ Մելքոնեանի եւ Յակոբ Նորունիի կամ Նշան Ծահէնի (Սուրիա—Լիբանան) գործերուն միջեւ յատկանշական եւ որակական տարբերութիւնները կը չքանան: Այն տպաւորութիւնը կը ստացուի որ ասոնց (ներառեալ բազմաթիւ ուրիշներու, գորս հոս թուելը ո՛չ անհրաժեշտ է, եւ ոչ ալ հնարաւոր) բոլորին գրական ստեղծագործութիւնները նոյնքան արժեքաւոր են եւ արժանի նոյնանման դրուատանքի: Այս՝ պարզ այն պատճառով որ արժեքաւորն ու անարժեքը, գրական գոհարներն ու վրիպանքները չեն գանազանուած իրարմէ՝ արժանանալով նոյն գովա-սանական ընդհանրացումներուն: Արժեւորումի կամ դատումի ճիշդ չկայ, եւ ոչ իսկ՝ բծախնդիր գրական վերլուծում:

Բազմաթիւ վերլուծական էջեր կան, ճիշդ է, բայց ասոնք կը ծառայեն ո՛չ թէ իւրաքանչիւր հեղինակի գործը գեղարուեստական չափանիշերու վրայ հիմնուած քննարկումի ենթարկելու, այլ լոկ նոյն յայտարարին տակ դասաւորելու:

Այս պատճառով, երբեմն, կարգ մը գրական արժեքէ գուրկ գործեր արժանացած են մասնաւոր ուշադրութեան, եւ հոսակ նաեւ՝ երկարապատում ու մանուածապատ բայց ոչ—գրական վերլուծումի: Մինչ շատ աւելի կարեւոր, ձեւով ու բովանդակութեամբ կուռ, գրական երկեր մնացած են շուքի մէջ, եւ երբեմն նոյնիսկ՝ անտեսուած: Կամ երբեք չեն յիշատակուած: Թուենք մէկ օրինակ միայն. Սիմոն Սիմոնեանի Անժամանդորու, որ լոյս տեսած է 1985էն առաջ: Մենք գիտենք, թէ Գեղամ Սեւան գիրքը ստացած եւ կարդացած էր ժամանակին, իր իսկ վկայութեամբ՝ մեզի, Պէյրութի վերջին այցելութեան ընթացքին:

Եւ ա՛յս ընթերցողը, հիմա, շուարած կը մտածէ, թէ ինչպէ՛ս պիտի ջոկէ ատոք հասկը մոլախոտէն:

ՔԳԷՈՐԳ ԱՃԵՄԵԱՆ